


ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԱՐԻԱ
Տարեկան . . 12 ծր.
Վեցամսեայ . . 6 "
ԱՐՏԱՍԱՀԱՆ
Իրկու թիւ մէկ ծրարով
Տարեկան . . 14 ծր.
Վեցամսեայ . . 7 "
ԱՄԵՐԻԿԱ
Տարեկան 2.60 ծրար
Վեցամսեայ 1.50 "
Կ Ա Ն Խ Ի Կ



Լ Ր Ա Գ Ի Ր

Ա Ջ Գ Ա Յ Ի Ն Ե Ի Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

ԿԸ ՀՐԱՏԱՐԱՐՈՒԹԻ ԱՄԵՆ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

Ծրարացման տոհմը
20 ամսեայով

ՀԱՍՏԵ

Rédaction du journal

„Ipravounk“

VARNA (Bulgarie)

Редакция

на ВѢСТНИКЪ

„Иравункъ“

ВАРНА (България)

Գրողները եւ

չեն տրուիր

ՀԱՅԱԿԵԱՆ ԿԵՂՈՆԸ

Ամերիկայի Հնչակեան Նահանգային վարչութիւնը քանի մը շաբաթ առաջ կը յայտարարէր. «Երբեմնի Հնչակեան գործիչ՝ Պ. Ս. Սպաս-Գիւլեան և իրեն հետեւող կարգ մը անձեր՝ որոնք վերջերս Նազարէկի միանգամ ընդ միշտ խարխաւած աթոռը վերահաստատելու նպատակաւ ի գործ դրուած ջանքերու մասնակից եղած էին, իրենց միտքն ու սկզբնական իրաւունքն իրենց իրաւունքները չեն հրաշարուիր, չեն զոհուած և անհատական իրաւունքներն չեն զոհուած»:

Ամերիկայի այս յայտարարութիւնը կարգաւորել վերջ, ուստի հայ լեզուով Հնչակ մը եկաւ յայտարարել թէ՛ յեղափոխական գործի դէմ իրենց լարած սոսկալի դաշնադրութեան պատճառով Հնչակեան կուսակցութեան ընդ միշտ արտաքսուած են Նորակազմ. Հնչակեան «հերձուածին» պատկանող կեդրոնի անդամները, ուրիշ մէկ քանի գործիչներ և ասոնցմէ զատ հին Հնչակեան երեք գործիչներ, իբր գաւազնից առաջիններուն:

Այս երկու յայտարարութիւններն ալ բնականաբար շատ գէշ տպաւորութիւն թողոցին հայ հասարակութեան այն ահագին մեծամասնութեան վրայ, որ ի սրտէ կը փափաքէր կուսակցութիւնները միացած և ազգային յեղափոխութիւնը օր առաջ ուժեղ տեսնել: Իսկ ասոնքին սաղաթիւական խնդրութիւն և կոկոնցներ լսուեցան յեղափոխութեան այն կարգ մը ազգաւորներէն միայն, որոնք սովոր են հայ ժողովուրդին ճամբուն վրայ թակարդներ լարել և ինկած գիակներովը իրենց փորը կշտացնել: Այժմ խնդիր է գիտնալ թէ՛ հայ ժողովուրդին այն ստուար մասը՝ որ Հնչակեան կուսակցութեան ծրագրին համակիր է, պիտի թողու որ այդ կուսակցութեան կեդրոնի նոր երկրպագութիւնը պատճառ դառնալով Հնչակեան քայքայման Սենք այդչափ թուրու:

Թիւն չենք սպասեր յեղափոխութեան պաշտպան հայ դասակարգէն և չենք յուսար որ ամբողջ 15 տարի իր ծոցին մէջ սնուցած՝ փայփայած կազմակերպութիւն մը մասնաւորներու անհասկացողութեան զոհ տայ:

Հայ ժողովուրդը և մասնաւորապէս Հնչակեան մասնաճիւղերը ներկայ պարագային պարտին վերապահութեամբ ցերեկային կեդրոնի երկու պառակտեալ հատուածներուն մէկմէկու դէմ հրապարակ նետած այս ամբաստանութեանց մասին: արդէն վերջին յայտարարութիւնը ցոյց կուտայ թէ՛ ո՛րչափ զբոսուած ոգիով խմբագրուած է. վերակազմեալ խմբակէն վաղը հրապարակ ելուելիք միւս Հնչակէն ալ նուազ զբոսուած չենք սպասեր: Բայց յեղափոխութեան շահը ու անկողմնակալութիւնը կը պահանջեն որ դէպքերը առ այժմ պաշարելու թեմաք ընենք, որչափ որ մեզի ծանօթ են. անկէ անդին բուն խնդրոյն մօտէն քննութիւնը կը մնայ ամէն քաղքի Միացեալ Հնչակեան Մասնաճիւղերու շէջ: Հայեցողութեամբ ընտրելիք պատգամաւորաց ժողովոյն, որուն գումարումը պէտք չէ շատ յապաղեցընել:

Սենք առ այժմ մանրամասնութեանց չափով մտնենք և ոչ ալ մեզ հասած մասնաւոր տեղեկութիւնները իբրեւ անվիճելի ճշմարտութիւններ հրապարակել կուզենք: Բայց չը պիտի կրնանք լուռ անցնել կէտի մը վրայէ, որ մեր աչքին զարնուեցաւ սա ռուսահայ Հնչակի թիւը կարգաւորով:

Այդ Հնչակը յանուն «կենտրոնի» (պէտք է իմանալ հին Հնչակեան պատգամաւորներէ ընտրուած երեք ռուսահայերը) կանուանարկէ վերակազմեալներէ ընտրուած կեդրոնի անդամները, իր անուանար. կուսեանց հիմ բռնելով Հնչակեան Միութիւնը գոյանալէ առաջ ասոնց վերագրուած յանցանքները: Արդ, մենք բացարձակ իրաւունք ունենալ կը կարծենք գոնէ սաչափը հարցնելու իրենց թէ՛ եթէ այդ ամբաստանութիւնները հիմ ունենին, դուք ինչո՞ւ, առանց կան:

Խաւ քննելու, այն անձերը ձեզ պաշտօնակից ընդունեցիք և երկար ամիսներ գործակցեցաք անոնց:

Սենք կը կարծենք թէ, Հնչակեան կեդրոնի երկու հատուածները իրենց իրաւասութեան սահմանէն շեղած կըլլան մէջերին ծագած անհամաձայնութիւնը ամենաանպատ. շաճօրէ՛ հրապարակելով: Ձիրենք ընտրող պատգամաւորները, կը կարծենք գիտնալ թէ, իրենց առջեւ ուղի մը գծած էին, այն է Միութեան հիմերը հաստատ պահել և աւելի ամրապնդել: Իսկ անոնք իրենց ստանձնած այդ պարտականութեան հակառակ է որ կը գործեն այսօր: Եթէ իրենց մէջ համաձայնութիւնը անկարելի եղաւ, պարտէին մասնաճիւղերու կարծիքը հաւաքել կամ նոր պատգամաւորական ժողով մը հրաւիրել:

Ըստ մեզ, կեդրոնի գործած սխալը ակնհայտ է. այժմ կը մնայ մասնաճիւղերու խոհուն և շըրջա. հայիաց վարմունքին սպասել:

ԳՈՐԴԱՆԵՐ

ՄԱՄՈՒԼԻ ՇՈՒՐՁԸ

Տեղույս Թաղ. Խորհրդոյն Որբերու անունը շահագործելով՝ ձեռնարկած հանգանակութեան առթիւ, Պոլսոյ Սոցիալիստիկ կը գրէ:

Վերջերս հրատարակուած հայրապետական կոնգրեսներու շաբաթ մէջ տեղեկութիւն մը կայ, որուն համեմատ Վառնայի կարօտ տղայաց պատասխարներն («») նպաստելու համար՝ արտասահմանի ժողովուրդեան յորդորական կոնգրէ մը ուղղուել է: Այդ կոնգրէն խնդրել է Վառնայի Թաղ. Խորհուրդը, առանց սակայն ամենեւին տեղեկութիւն տալու թէ՛ ո՞ր կը գտնուի այդ հաստատութիւնը, ո՞րքան տղայ կը պատասխարէ, ինչ է պիւտճէն, հասոյթը եւ ծախքը ինչպէս կը հայթայթուին, եւ այլն: Եթէ մեզի մնայ, մենք միանգամ ընդմիշտ կըսենք թէ, Վառնայի մէջ այդ տեսակ հաստատութիւն մը գոյութիւն չունի: Որքան կը յիշենք, տեղույն Տ. Սարգիս քահանայ վերջերս Ս. Էջմիածին ուխտի գացած ըլլալով, այդ առթիւ նպաստներ ստացեր է իբր 120 ոսկիի մօտ: Ըսողներ ալ կան թէ այս գումարին եռապատկել եղեր է հաւաքուած

գումարը: Սակայն զարմանալի է որ այդ գումարը ստացուած է յանուն այդ անոք տղայաց պատասխարներն, մինչդեռ Վառնայի մէջ գոյութիւն չունի այդ տեսակ հաստատութիւն: Կը յիշենք թէ անցեալ տարի Թաղ. Խորհուրդը զարմեալ նոյն քահանայ զրկած էր Ռուսմանի, ուր 2,500 ֆրանք հանգանակեց ի նպաստ վարժարանին: Տ. Սարգիս քահանայ քահանայն հանելու գաղտնիքը գտեր է, եւ կրցեր է կարեւոր գումար մը ձեռք բերել: Սակայն ինչ հարկ կայ անոյ համատարածութեան մը անունը շահագործել, փոխանակ իրողութիւնը երեւան դնելու:

Լ'Առաւելի վերջին թիւին մէջ կը կարդանք:

Մէկ քանի տարի կայ, հայազգի նորատի հայրենաւէր մը, Լեւոն պէյ Ակոբեան, զաւակը ողբացեալ Թագաւոր փաշա Ակոբեանի, ազգին 90,000 ֆրանքի գումար մը կը նուիրէր, Բարեկի մէջ երեք ակաւաւոր հայերու զայն յանձնելով: Ուրախութեամբ կիմանանք թէ վեհանձն նուիրատուն որոշած է վերջապէս սահմանել այդ գումարին գործածութիւնը, (որ տոկոսներովը 100,000 ֆրանքը կանցնի) ու կանոնաւորել այդ առթիւ հարկ դատուած աւանդի ու հսկողութեան պայմանները:

Լ'Առաւելի իր վերջին թուով, խօսելով Ռուսիոյ մէջ հայ տարւոր ռուսացնելու մասին մեր մէջը կարգ մը մոլեռանդ ռուսատեացիներու տարածել նկրտած ծաղրայեղութեանցը վրայ, կըսէ:

Բառորդ դարէ մը ի վեր 250 ընտանիքներ միայն, այսինքն 1,250 անհատ Ռուսիոյ մէջ հայ եկեղեցին ուրացան: ու այդ ուրացումներն ալ կամաւոր եղած են: Թուրքիոյ մէջ, ուր հաւատաւորութիւնները միշտ կամաւոր չեն, իսլամացած հայերու թիւը շատ կանցնի ռուսացած հայերու թիւը: հաւասար թուականի մը համար: Միմիայն ջարդերու ատեն, 40 կամ 50 հազար հաշուեցին բռնի կերպով իսլամացող հայերու թիւը: Իսլամացած հայերը իրենց անունն ու լեզուն չեն պահեր ու իրենց մզկիթներն ալ Լուսաւորիչին ձօնելու կարող չեն: Անոնք պարտաւոր են թուրքերէն խօսել, ու Մէհմէտ կամ Ալի, Հասան կամ Հիւսէյն անունը կրել, ու ազօթել այնպիսի մզկիթներու մէջ, ուր քարոզութիւն կըլլայ քրիստոնեաները

ատել ու ջարդել։ Անոնց հաւատարմութիւնը, հայերու թիւը նուազեցնելով հանդերձ, հաւասարապէս մեր ցեղին դահիճները կաւելցնէ։ Ու այս շատ աւելի ծանր վտանգ մըն է քան ընչաքաղց գիւղացիներու մէկ աննշան թիւին դանդաղ ու անկատար բուսացումը, որոնք իրենց նախահայրերուն հաւատքէն ձեռք կը քաշեն, իրենց հողերը աւելցնելու ակնկալութեամբ։ Անոգիւ է ըսել թէ կոտորածներու խօսքը չ'ենք ընել, որոնք մեկ օրուան մէջ մեզի աւելի շատ հայեր կորսնցնել տուին, քան ռուսացուի դարու մը մէջ մեզի պատճառել կըրցածը։ Մենք Ռուսահայերու ապագային վերաբերութեամբ մեր յոյսը կտրած չենք։

**ՅՈՒՍԵ ՓԱՇԱՅԻ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՏԱԿԸ**
(Շար. մախորդ թիւէն)

Այժմ քանի մը խօսք մեր օտար յարաբերութեանց մասին. որովհետեւ այս վերաբերութեամբ է որ մեր կառավարութեան գործը արդարեւ յուսահատելի կը դառնայ։ Մեր թշնամիներուն դէմ պատերազմելու չ'փ գորաւոր չըլլալնու պատճառաւ, ստիպուած ենք օգնութիւն խնդրել օտար բարեկամներէ, թշնամական եւ սոնց նախանձոտ, թշնամական եւ միաժամանակ հզօր շահերը մեզ այնպիսի կացութեան մը մէջ գրած են, զոր անկարելի է նկարագրել։ Մեր իրաւունքներու փոքրագոյնը պաշտպանելու համար, ստիպուած ենք ցոյց տալ, մեր նախահարց թագաւորութիւններու տիրանալու համար ցոյց տուածէն աւելի ոյժ, հնարք եւ քաջարտութիւն։ Մեր օտար դաշնակիցներու մէջ զուգ Անգլիան պիտի գրտնէք առաջինը։ Իր քաղաքականութիւնն ու բարեկամութիւնը իր հիմնարկութիւններուն նման հաստատուն են։ Անցեալին մէջ մեզ անսահման ծառայութիւն մատուցած է ան, եւ ապագային անոր մեզի տալիք օգնու-

թեան հրաժարել անկարելի պիտի ըլլայ։ Ինչ որ ալ պատահի, Անգլիացի ժողովուրդը, աշխարհի ամենէն վրատահալին եւ ամենէն զարմանալին, մեր առաջին եւ վերջին դաշնակիցը պիտի ըլլայ։ Ես պիտի ուզեմ կամովին կորսնցնել շատ մը նահանգներ, քան Բարձր Դուռը լքուած տեսնել Անգլիայէն։

Յիշատակ դաշնակից մըն է, որուն հետ միշտ ամենամեծ յարգանքով կը վարուինք, ոչ միայն այն պատճառով որ ան կրնայ ամենէն ազդու օգնութիւնը տալ, այլ որովհետեւ կրնայ մեզ պատահական ամենէն մահացու հարուածով։ Այս ասպիտական ազգը աւելի զգացման անձնատուր կըլլայ, քան թէ հաշիւի։ Ան փառքի եւ մեծ գաղափարներու սիրահարն է, նոյնիսկ երբ անոնք իր թշնամիներէն յայտնուին։ Այս մեծողի ժողովուրդին հետ դաշնակցութիւնը ապահովելու լաւագոյն միջոցն է հետեւի իր գաղափարներուն եւ յառաջդիմութիւն ցոյց տալ, որոնք կոչ պիտի ընեն այնքան իր երեւակայութեան, որքան իր իմացականութեանը։ Եթէ երբեք Յիշատակ մեր զատը լքանէ, մեզ դէմ թշնամութիւն պիտի սարքէ եւ այսպէսով միջոցը ըլլայ մեր աւերումը կատարելու գործելու։

Աւստրիա, իր Եւրոպական շահերովը կաշկանդուած, ցարդ ստիպուեցաւ իր Արեւելքի դերը սահմանափակել։ Որով պատերազմի միջոցին մեծ սխալ մը գործեց։ Գերմանիայէն անշատուած, ապագային նա աւելի լաւ պիտի ըմբռնէ հիւսիսային վտանգը— եւ այս վտանգը այնքան սպառնալից է իր կայսրութեան, որքան մերինին համար։ Որքան երկար որ Վիէննա լուսաւոր եւ հաստատուն քաղաքականութեան մը հետեւի, նա Բարձր Դուռն ամենէն յարմար դաշնակիցը պիտի ըլլայ։ Ամենամեծ չարիքը, այս առաւել քան զորէ մը ի վեր Արեւելքը յուզող ոտնձիգ չարիքը, Աւստրիոյ գործած օժանդակութեամբ եւ Արեւելքի մեր բոլոր դաշնակիցներու օգնութեամբ միայն կարելի է ետ մղել։ Գալով Բրուսիոյ, նա դէպի Արեւելեան հարցը բացարձակ անտարբե-

րութիւն ցոյց տուած է ցարդ։ Շատ հաւանական է որ, իր գահալէժ քաղաքականութեամբ, մեզ զոհէ ինչպստ իր գերմանական միութեան ծրագրին։ Բայց անգամ մը որ այս միութիւնը կատարուի, Գերմանիա պիտի չուշանայ նշմարելու թէ նա Արեւելեան խնդրին մէջ ունի առնուազն այնքան վտանգուած շահեր, որքան Եւրոպական ուրիշ որ եւ է երկիր։ Սակայն, տա՛ր երկիրք որ նա Աւստրիական կողմակցութեամբ գնելով չստիպէր մեր թշնամիները անդառնալի կերպով գրաւելու մեր Եւրոպական նահանգները։

Վերջապէս, մեր կայսրութեան բնական թշնամին, Ռուսիոյ կողմէ։ Այս պետութեան դէպի Արեւելք ընդլայնումը Մոսկովական ճակատագրի անխուսափելի օրէնքն է. եւ եթէ ես ռուս նախարար մը եղած ըլլայի, աշխարհը շարժման մէջ պիտի դնէի Պոլսոյ տիրանալու համար։ Հետեւաբար, պէտք է որ Ռուսիոյ թշնամական գործունէութեանն ոչ զարմանալ, ոչ ալ զանգատինք։ Անոնք մեզ հետ կը վարուին այնպէս, թէ եւ նոր պայմաններու տակ, ինչպէս մենք կը վարուէինք Ստորին-Հայսրութեան Յոյներուն հետ։ Մոսկովական արշաւանքներու դէմ զմեզ պաշտպանելու համար, միմիայն մեր իրաւունքներուն ապաւինելը տղայական պիտի ըլլար։ Մեզ պէտք եղածը ոյժ է, բայց ոչ հին պատմական ոյժը, զոր մենք ի զուր պիտի փորձենք վերակենդանացնել, այլ նոր եւ անդիմադրելի ոյժը, զոր գիտութիւնն ու արդի սկզբունքները զրոծ են եւրոպական բոլոր ժողովուրդներուն ափին մէջ։ Մեծն Պետրոսի ժամանակէն ի վեր, Ռուսիա տարապայման յառաջդիմեց։ Վարձ ժամանակի մէջ իր երկաթուղիները անոր ոյժը պիտի տասնապատեն։ Ինչ որ զիս սաստկապէս կը վրդովէ, այն է թէ Եւրոպական ազգերու շատերը Ռուսիոյ ապագայ յառաջնադասութեան նկատմամբ աստիճանաբար անտարբերութիւն ցոյց տալ կրնան։ Դէպի կեդրոնական Ասիոյ գործերը Անգլիոյ անտարբերութիւնը զիս թէ կը զարմացնէ եւ թէ կը վրդովէ։ Ինչ որ սա-

կայն զիս աւելի կը վրդովէ, կովկասեան նահանգները խաղաղեցնելով ձեռք բերուած Ռուսական դիրքի մեծ փոփոխութիւնն է։ Իմ հաստատ կարծիքս է թէ Ռուսիոյ ապագայ միջնէն խիստ յարձակումները մեր փոքր-Ասիոյ դէմ պիտի ուղղուին։ Կը մաղթեմ որ Ձեր վեհափառութիւնը անդադար ֆանայ վերակազմել մեր ոյժերը։ Ո՛վ գիտէ թէ մեր դաշնակիցները միշտ ի վիճակի եւ կարող պիտի ըլլան պէտք եղած ժամուն մեր օգնութեան փութալու։ Եւրոպական ներքին կոիւր, եւ Ռուսիոյ մէջ Պիզմարք մը, կրնան աշխարհի մակերեսովը փոխել։

ՅՈՒՍԵ
(Շարունակելի)

ԹՂԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՊՈՒԳՐԵՇ, 20 Փետրուար

«Տեղւոյս հայ գաղթական Տիկինները իրենց մէջ Որբախնամ Յանձնախումբ մը կազմելով, հանգանակութեան ձեռնարկած են. եւ սա այժմ գոյացած արդիւնքն է մաս մը Պատրիարքարան զրկեցին եւ մաս մըն ալ Դափնեան Որբանոցին։ Ազնիւ Տիկնանց այս բարեկամական ձեռնարկը յոյժ գովելի է։

Ամսոյս 2ին, տեղւոյս հայկական ընկերացարանին մէջ գաղթականներէ ժողով մը գումարուելով, որոշուեցաւ մանկապարտէզ մը բանալ Ընթերցարանին կից եւ ասոր վարչութեան մասնակարարութեանը տակ։

Այս որոշման վրայ, ընթերցարանի ընկերութեան անդամները հարկ դատեցին իրենց կանոնադրին մէջ մասնակապարտէզի մասին յօդուածներ աւելցնել եւ երեսուտը հաւասարակշռելու միջոցներ փնտռել։ Ահա այս աշխատութեանը համար Յանձնախումբ մը րոտուեցաւ հինգ անդամէ բաղկացիւ. որք են՝ Տ. Տ. Յ. Փափազեան, Ղ. Աւետիս, Գ. Նուբարեան, Յ. Պապեանեան եւ Մ. Չիլիկիւրեան։ Պիւսձէն համակշիւելու իբր միջոց այս Յանձնախումբը ձեռնարկեց թատերա-

Ա. ԵՐՏԱՆԵԱՆ
(58)
ԹԻԱՊԱՐՏԸ
ՄԱՍՆ ԵՐՐՈՐԻ
ՎՏԱՆԳԻՆ ՀԱՆԳԻՊ

— Տէր Կոմիտաս... անկարելի է։ Այդ քահանան իր բարի գերն ունեցած է մեր գործունէութեան մէջ։ Դուք զրպարտութիւն մը ըլլայ...
— Ո՛հ, չէ՛... ըսողը հաստատ աղբիւրէ մը տեղեկացած էր եւ գիտէր թէ Տէր Կոմիտաս գաղտնի կերպով Վալի բաշային ապարանքը մտած է...
— Կեցի՛ր, սիրելի Աւետիսեան, միայն այդ պատճառով մասնութեան սեւ մըրը քսուած է Տէր Կոմիտասի ճակտին։ Եթէ ոչ ուրիշ ապացոյցներ կան...
— Ապացոյցներ կան...
— Յայտնեցէ՛ք, կը խնդրեմ։
— Նախ՛ երկու օր առաջ այդ քահանան Արարուց թաղին մէջ ընկնող մեր ընկերներէն մէկուն տունը կը գտնուի եւ հոնտեղ անուղղակի կերպով հարցաքննութեան տակ կ'անէ ձեր գործունէութիւնն ու նպատակը։ Յետոյ՝ կը յայտնէ ձեզի հետ տեսակցութիւն ընելու փափաքը։

— Աղէ՛կ... Ե՛րբը։
— Երկրորդ օրը յանկարծ մեր ընկերը կը ձերբակալուի ու անորմէ կը պահանջուի ձեր ո՛ւր պըտնուիլը։
— Դեռ բանտարկուած է։
— Այո՛... այսօր Տէր Կոմիտաս տեսակցութեան գացած է։ Առանց ամենալու, պահանջած է որ զիս-ցած ճշմարտիւնը չուրանայ, եթէ ոչ ծանր դատապարտութիւն մը պիտի կրէ...
— Ներսէս Արքեպիսկոպոս, որ խոր լուսթեան մը մէջ ինկած մտիկ կընէր Մկրտիչ Աւետիսեանի յայտնածներուն, պահ մը Վանականին երեսը նայեցաւ, անոր որոշակի այլայլութիւնը դիտեց ու ճշուեցաւ արտայայտութեամբ մը հաղցուց։
— Ի՞նչ կը մտածէք, Վանական։ Կը յուսա՞ք թէ Տէր Կոմիտաս մարդկային բարի կերպարանքով հրէշ մը ըլլայ... կը յուսա՞ք թէ տարիներով աղբին ցաւերը լացող այդ եկեղեցականը սրտին մէջ սեւ օձ մը սնուցած է եւ այսօր կը դաւաճանէ իր սկզբունքին ու իր պաշտած գաղափարին դէմ...
— Վանական, որ իր հոգւոյն ամենէն մօտիկ եկեղեցականը նկատած էր Տէր Կոմիտասը, մէկէն ի մէկ չկըցաւ որոշում մը տալ։ Հետեւաբար՝ պատասխանելէ առաջ, ակամայ շարժում մը ըրաւ, եղած զարհուրելի ամբաստանութեան ծանրութիւնը նկատի առաւ ու յետոյ՝ մըմնջեց։
— Ո՛վ գիտէ... անա՛նկ սեւ օրերու հառած ենք որ՝ զփաղաքար մեր ծանցած հրեշտակը սատանայ մը դարձած է... Իրաւ է որ Տէր Կոմիտաս հայրենասէր եկեղեցական մըն է... տակա՛յն, չենք կրնար պնդել թէ փոխուած չէ... չենք կրնար

հաստատապէս ըսել թէ բարութիւնը զարկելի նենգութեան մը տեղի տուած չէ անոր էութեանը մէջ, ճառագայթի մը պէս՝ որ տեղի կուտայ մուսլ խաւարի մը...
— Այդպէ՛ս է... հառաչեց Ներսէս Արքեպիսկոպոսը անբացատրելի դառնութեամբ մը։ Միայն թէ անհոգ եղէք, սիրելի Աւետիսեան, կառավարութիւնը չկրնայ յաջողել... մեր գտնուած տեղը՝ ամենէն ապահով տեղն է։ Դուք յայտնեցէք մեզի մեր ներքին ուժերու մասին... Ի՞նչ կընեն կուսակցական խեղապատակներու ճառարող միաբնակներ... Ի՞նչ կը մտածեն ներկայ հանգամանքներու մէջ, երբ վերահաս վտանգը ժանիքաւոր ցանցէ մը դուրս գալարուող խփ մը պէս, կը տնկուի մեր գէմը ու կը սպառնայ...
— Մկրտիչ Աւետիսեան, որ իր բոլոր ուժովը կը ուսած էր «կուսակցութիւն» բառին դէմ եւ ամեն կերպով ցոյց տուած էր անկից եկած ապագայ չորիքը, զրեթէ հոգեկան անզուտ գառնութեամբ մը պատասխանեց։
— Ա՛խ, ի՞նչ կարելի է ընել... վերջը մեր օրերուն մէջ խոր բացուած է՝ անդարմանելի փափաք մը պէս։ Կուսակցութիւններու կազմուելը հաստատ հիմ ձգած է ու քանգուելու հնար չկայ։ Արդէն իւրաքանչիւր կուսակցութիւնն իր ներկայացուցիչն ունի, որ կը վարէ գաղտնի մասնաձեւը մը։ Միեւնոյն ատեն, բոլորութեան ներքեւ սկսած են դրամ պահանջել...
— Բռնութեան ներքեւ սկսած են դրամ պահանջել։
— Այո... հակառակ պարագային մէջ, սպառնա-

ՀԱՎԱՏԻՍԱԹԸ ԲՕԼԻԹԵԳԻՅԷ

Թ Ի Ի Ր Ք Ի Ա

Պապը Սերապէր 270,000 քի-
լոկրամ տիւմանարգ պարուծ սա-
թըն ալմագ իչին պիր ալման
ֆապրիգասը իւլ մուսապէրէ իթ-
մէքտէ օլտըղը Սթանպօլտան պիլ-
տիրիլիօր :

— Աթինաւան պիլտիրիլտիրի
իւզրէ, Մաքէթոնիա միւթէմէ-
քին բոււմ էհալինին իթիլալա իչ-
թիրաք իթմէտիկինտէն Սուլթան
մէմնուն Կալմըշ օլմաղլէ, Եւնան
Գրալընա վէ մախտուլընա վէ վիւ-
քէլա ընթիսի Մ. Տէլիեանիսէ նի.
շանլար իհտա իթմիշ տիր :

— Պիր. շալիսթա կէօրէ, ինկի-
լիգ էլչիսի՝ Մաքէթոնիա իչին
գապուլ օլընան իսլահաթըն Անա-
տօլուտա էրմէնիլէրին միւթէմէքին
օլտըղը վիլալէթլէրտէ տախի իհրա
օլընմասը իչին Եւլտըղա միւրա-
հաաթ իթմիշ :

Սթանպօլտան վէրիլէն պիր թէ-
լէկրաֆ պու շահաթըն էլան թաս-
տիգ օլընմասըղըն պիլտիրիօր :

— Մաքէթոնիալըլար իչին սու-
տուր իտէն աֆլը շահանէ մուհիպ
400 քիչիտէն զիյատէ մահպուսա-
լըն սերպէսթ պըրագըլտըղըն
Պապը Ալի Աստրիա վէ Բուսիա
էլչիլէրին պիլտիրիլի տիր :

— Քէզա պուկար մուհաճիլէ-
րին վէ ֆիրարիլէրին մէմլէթլէ-
րինէ ապտէթ իթմէլէրինէ սուհու-
լէթ վէրմէք իչին պիր գոմիսօն
թէշթիլ օլընտըղը Պապը Ալիտէն
էլչիլէրէն պիլտիրիլի տիր :

— Աստրիա վէ բուս էլչիլէրի-
նին իսլահաթ իչին վէրմիշ օլ-
տըղարը նօթանըն հաքեաթը մու-
հիպ Պապը Ալի պիր իսլահաթ
հէտվէլի թէրթիպ ու թանգիմ ի-
տէրէք, անը Սուլթանըն թաստի-
գինէ իհալէ իթմիշ տիր : Թաս-
տիգտէն սօնրա մէքթիւր հէտվէլ
Աստրիա վէ Բուսիա էլչիլէրինէ
թէպիլղ օլընմաս :

— Չէթինէտէն վէրիլէն պիր թէ-
լէկրաֆ պիրնան, Արնապուտար
Պէրուլթ Եւլընտա Գարատաղըլա-
րըն իւզէրինէ հիւճու իտէրէք,
անլէրտէն 3 քիչի գաթլ իթմիշ-
լէր, վէ քէնտիլէրինտէն տախի
պիր քիչի էօլմիշ տիր :

— Աստրիա էլչիսի Մ. Գալիշ
Միթրօփիցատա եէնի պիր գօնսօ-
լօսհանէ թէսիս իթմէք իւզրէ,
շըվալիէ տը Չամպօրըն գօնսօլօս
թանըլմասըն Պապը Ալիտէն թա-
լէպ իթմիշ տիր : Միթրօփիցա
4,000 նուֆուսը օլան պիր գաաա-
պա իսէ տէ մէվզըսը բէք էհէմ-
միլէթլի տիր : Սէլանիք շըմէտը-
ֆէրի օրայա եէթիշմիշ օլուպ,
հազընտա Եէնի-Բազարա վէ Պօս-
նայա գաաաթ թէմիտ օլընա-
հաք, վէ նիհայէթ Մաքէթոնիա-
տան Պօսնայա վէ Սէրպիտան

Գարատաղա կիտէն Եօլար Միթ-
րօփիցատան էլչիլիօր :

— Գօնեաւան էլչիլիէ գաաաթ
հաքըլահաք օլան շըմէտըֆէրին
մուգապէլէնամէսին Սուլթան պա-
իրատէ թաստիգ իթմիշ տիր :

ՏԱԽԻԼԻՑԷ

Ոֆիտան էլքօրալը մուխպիր-
լէր շու Եօլտա մալիւմաթ վէրիօր-
լար :

Մէշհուր գոմիթա ընթիսի Մ.
Պօրիս Մարաֆօվ վիւքէլա ընթիսի
Մ. Տօք. Տանէվէ եէնի պիր մէք-
թուպ հազուպ, Մաքէթոնիա էհա-
լիսինին ահալը հազըրէսինինադշ
իտէրէք, անլէրէ Եարտըմա եէթիշ-
մէսինի բէճա իթմիշ տիր : Քէզա
Մ. Մարաֆօվ ըսեան իչին կէօ-
րիւմիւշ օլան հազըրըղարը թաա-
տաա իտէրէք, տէմիշ տիր «Պուլ-
կարիանըն իտարէի հիւքիւմէթի
հէր հանկը ֆըրգատան թէշթիլ օ-
լընըր իսէ, հիշ պիրիսի Մաքէ-
թոնիա մէսէլէսինէ միւտալէլէ
իթմէքտէն կէրի տուրամայաճադ .
շու հալտէ Զանքօվիսթլէր էհալի-
նին թէվէտուհընը վէ իտարէի
հիւքիւմէթի էլլէրինտէն զօյպ իթ-
մէմէք իչին կիւն էվլէլ իլէրի ա
թըլմալը տըրլար : Վէ քէզա Մա-
րաֆօվ տէօվլէթլէր ինտիսին մէսուլ
գալմագսըղըն նէ Եօլտա ըսեանա
հարտըմ իթմէք լազըմ կէլտիկինի
Մ. Տանէվէ կէօսթէրմիշ :

Մ. Մարաֆօվը պու մէթիւպը
իչին թաան շէօլլէ սէօլլէօր :

«Շու էմալսըղ մէթիւպ, էվ-
վէ բէճա իթմէք, սօնրա գօրգու
վէրմէք վէ էն սօնրա էվրօրալը
ալտաթմագ իչին հիլլէ էօլրէթ-
մէք» :

— Սօֆիտան տիկէր պիր թէ-
լէկրաֆ պիլտիրիլի տիր :

«Բուս խաֆիէ մէմուրլարը Բիւօ
վէ Աթօս թարիգի իլէ Մաքէ-
թոնիայա կէշմիշ տէյօրլար, Պուս-
լար թիւրքլէրըն վէ Պուկարալա-
րըն սինօրլար իւզէրինտէ վէ Մա-
քէթոնիատա հարէքաթընը վէ
իսլահաթըն իհրաաթընը կէօզտէն
կէշիլէրէքլէր իթմիշ» :

ԱՍԸԼԱՐ ՎԷ ԱՐՆԱՎՈՒՏԼԱՐ

Աստրիա վէ Բուսիա տէօվլէթ-
լէրինին թէհտիտի վէ Պուկարիա-
նըն գոմիթէլէրէ գարշը էլէ ալ-
տըղը թէտպիլէրին խիլաֆընա օ-
լարագ, Մաքէթոնիատա էլան
ասը շէթլէրին վիճուտ կէօսթէր-
մէսի Պապը Ալիին բահաթընը
սէլպ իտէյօր, զիրա շէտիտ թէտ
պիլլէր էլէ ալմագ իչին էհէպի-
լէրին միւտալէլէսինտէն գօրգը-
յօր : Պու սէպէպլէ Պապը Ալի գօ-
միթէլէրին եէնի հարէքաթընտան
տօլայը տէօվլէթլէրէ վէրմէք իչին
պիր պէյաննամէ հազըրլմագտա
վէ տաըլարը գապթ իթմէք խու-
սուսընտա բուս էլչիսի իլէ միւզէ-
քէրէյէ տէվամ իթմէքտէ տիր :
Պու պապտէ Մ. Չինօվիլէ վէ Մ.

Գալիշ շէթլէրի մահվ ու թէսղիր
իթմէք իչին հէր նէ գաաաթ
Մաաաղաճա սերպէստիլէթ կէօս-
թէրմիշլէր իսէտէ, եէնիտէն սի-
լահ ալթընա տաքէր շաղըրլմագա-
սընը թէնպիհ իթմիշլէր : Պու կիւն
Մաքէթոնիատա 100,000 տաքէր
հազըր պուլընըյօր : Պիր բէվալէթլէ
կէօրէ տէ, էլչիլէր Արնապուտար-
տան սիլահալարըն թօրլանըլմասընը
թէքթարէն իտաա իթմիշլէր :

Թիւրք հիւքիւմէթի իչին էն
նաղիգ վէ միւշթիւլ Նօգթա Արնա-
պուտարա վէ Անտօլուտա Գիւրտ-
լէրէ վէ Չէրքէլլէրէ թէրթի սի-
լահ իթտիրմէք տիր : Սուլթան
Համիտ պու վահշի իսլամ գապի-
լէլէրի մախսուս խրիսթիանլարա
գարշը սիլահալանտըրմըշ, անլէրէ
եէնի սիստէմտէ թիւֆէնկլէր տա-
ղըթմըշ իքէն՝ շիմտի անլէրին սի-
լահընը թօրլմագ իսթէմլէքէք
վէ իսթէր իսէ տէ թօրլայաճալա-
հաք տըր :

ԺԸՆԷՎՏԷ ՄԻԹԻՆԿ

Պուստան էվլէլ իլան օլընտըղը
իւզրէ, կէշէն ճուճա կիւնիւ ժը-
նէվաէ էրմէնիստան վէ Մաքէթո-
նիա մէսէլէլէրի իւզէրինէ պէօլիք
պիր միթինկ վագը օլմուշ տըր :
Իչպու միթինկ էվրօրաա իլիմ
թահսիլ իտէն էրմէնի թալէպէ-
լէրի շիքէթլինին սալ ու զարէ-
թի իլ թէշթիլ օլմուշ տըր : Չը-
վիցէրիանըն սապըգ ճուճուրիլէթ
ընթիսի Մ. Նաշընալ միթինկէ բէ-
յասէթ իթմիշ վէ 2,060 զէվաթ
հազըր պուլընմըշ տըր : Պէլիղ
նուլզլար իրաա օլընտըգտան
սօնրա, Պուրգսէլ վէ Բիւրիզ մի-
թինկլէրինտէ վէրիլմիշ օլան գա-
րարլար մաալընտա պուրտա տա
պիր գարարնամէ գապուլ օլընմըշ
տըր :

Մ Ա Ր Ո Ք

Մարոք սուլթանընա գարշը
գապիլլէրի ըսեանա թէշվիլլէ
հիւքիւմտար օլմագ մալէլին էէ պու-
լընան Պու Համսարնըն օրտուսը
շու սօն հաֆթալարտա պազը դա-
լիպ, պազը մաղուպ օլտըգտան
սօնրա, նիհայէթ տաղըլմըշ օլուպ,
քէնտիսի տախի մէճրուհէն թու-
թուլմուշ օլտըղը թանճէրտէն
պիլտիրիլիօր :

ՍՕՆ ՀԱՎԱՏԻՍԱԹ

ԹԷԼԷԿՐԱՖԻԼԱՐ

Սրաւպօլ, 8 Մարտ

Սնատուլ վիլայէթլէրինտէ էր-
մէնիլէրին ահալի իւզէրինէ Օր-
մանեան Պատրիարք տէֆաթլէ
Սուլթանըն տըգգաթընը տալէթ
իթմիշ օլտըղընտան, պու տէֆա
գապուլ իթտիկի պիր թէքքէրէ՝
պուստան պէօլլէ էրմէնիլէրէ տի-
կէր թապաալար կիպի մուսմէլէ

օլընմասընա վէ հապըղըգ իտիլ-
մէմէսինէ Պապը Ալիին էմիլլէր
վէրմիշ օլտըղըն պիլտիրիօր :

Սրաւպօլ, 8 Մարտ

Մաքէթոնիա իչին բօլիթիգա
միւթլէրինտէ տախի իսլահաթ իհրա
օլընմասը պապընտա՝ ինկիլիղ էլ-
չիսինին միւրաճաաթընա տալիթ
շըգթըշ օլան շալէաթը սէֆարէթ-
հանէ թէքքիպ իթտի :

Սրաւպօլ, 8 Մարտ

Սթանպօլըն Սնատուլ վիլա-
լէթլէրինտէ տախի իսլահաթ իհրա
օլընմասը պապընտա՝ ինկիլիղ էլ-
չիսինին միւրաճաաթընա տալիթ
շըգթըշ օլան շալէաթը սէֆարէթ-
հանէ թէքքիպ իթտի :

Սրաւպօլ, 9 Մարտ

Աֆլը շահանէտէն իսթէֆատէ
իտէքէք օլան բօլիթիգա միւթ-
թէհիլլէրի 600 քիչի գաաա : օ-
լուպ, պուլարըն էքսէրիսի պուկար
բարազը տըրլար :

Թ Ի Ա Պ Ա Ր Տ Ը

Թիւսպարսի Ա. հատուր զրկած ենք
մեր հետեւեալ գործակալներուն .
ուստի այդ խիստ հետաքրքրաշարժ ու
շահեկան գիրքը ստանալ փափաքող-
ները կրնան գիտել՝

Պուրկազ	Տ. Արտաշէս Հարենցի
Ֆիլիպի	» Գ. Թիւթիւնճեանի
Շուլալ	» Ասլան Տօնիկեանի
Ռուսլու	» Սարգիս Մանուկեանի
»	» Է. Գաֆրիլէանի
Սօֆիա	» Ասատուր Մկրտիչեանի
Տօպիլ	» Նիկողոս Սիսակեանի
Սիլիւստի	» Յ. Սարգիսեանի
Սիլիւստի	Տէր Վաղինակ Հօր
Պուրէշ	» Յովհ. Փափազեանի
»	» Յովհ. Պիպէնեանի
Քօնստանդուլ	» Սիսակ Միլիքեանի
Կալաթ	Տէր Ղեւոնդ Հօր
»	» Գրիգոր Յակոբեանի
Գալիքի	» Կ. Էրզնկապեանի
Աղեքսանդ.	» Ս. Մարգարեանի
Պօսթոն	» Չ. Հայրենեանի խմբ.
Ֆիլիպի	» Կ. Մարութեանի
Ռուս	» Յակոբ Յարութեանի

176 Մաւուլ Պրիճ

ԾԱԽՈՒ ԳԻՐԲԵՐ

ՆՈՐ ԵՐԳԱՐԱՆ ԿԱՄ ՄՐՄՈՒՋ ՀԱՅ-
ԿԱԿԱՆ : Այս երգարանը Բ. ունգաճ
տպագրութեամբ աւելի ճոխացած ու բա-
րեփոխուած է, եւ հակառակ դէպքի
առանձնութեանը կը պարունակէ սոց-
գային հին եւ նոր խիստ շատ հր-
գեր : Գին 1 ձր.

ՆԵՏԱ ԿԱՄ ՄԱՄԻՍ ՊԱՄԱՐԸ,
Պուկարիոյ ազատութիւնէն առաջ
Պուկար գիւղացիին թուրքերէ կը-
րած տառապանքները ու անոնց նիստ
ու կացը կը պատկերացնէ : Եւս հե-
տաքրքրական :

Գին 50 ՍԱԼԹ.

ՀԱՅՐԵՆԻԿԻ ԶՈՂՆԵՐ : Պատկեր մը
Տանկահայաստանի իրական կեանքէն,
գրեց Ղ. Նահապետեան :
Չեղչեալ Գին 1 ձր.

Այս գիրքերը տառապալու համար
պէտք է գիտել իրաւունքի խմբաւորու-
թեան, բաթի ծախքը 10ակոն
սանթիմ միասեղ զրկելով. իսկ գիր-
քերու արժէքին համար, կթէ ուրիշ
գիրութիւններ պակսին, կ'նշուի ուրի
նամակագրօյ՝ 10 0/0 զեղչով :

Одговорникъ Н. Драгулевъ
Меч. на Хр. Н. Войниковъ—Варна